ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՀԻԵՀ ՌՈՍՏԱՄ ԱՖՇԱՐ

ԹԵՀՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան 2025

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ
АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ
БАХИЕ РОСТАМ АФШАР

АРХИТЕКТУРНО-ПЛАНИРОВОЧНЫЕ ПРОБЛЕМЫ СОХРАНЕНИЯ ИДЕНТИЧНОСТИ В СОВРЕМЕННОМ ГОРОДСКОМ ЛАНДШАФТЕ В ЦЕНТРЕ ТЕГЕРАНА

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры

по специальности 18.00.01

“Архитектура”

Ереван 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարպետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտ. թեկն., դոցենտ. Ն.Գ. Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ ճարտ. դոկտ.,պրոֆ. Լ.Վ. Կիրակոսյան
ճարտ. թեկն.,դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ «Հայնախագիծ» ԲԲԸ Մ.Յ. Իգիթխանյան

Պաշտպանությունը կայանալու է 26.11.25թ. 14:30-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Ճարտարապետություն» 029 մասնագիտական խորհրդում. հասցե՝ 0009, ք. Երևան, Տերյան փ., 105:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում. հասցե՝ 0079, ք. Երևան, Մառի փ., 17/1:
Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am
Սեղմագիրն առաքված է 24.10.25թ.
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Ճարտ. թեկնածու, ասիստենտ Դ. Ս. Նահատակյան

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и строительства Армении

Научный руководитель: докт. архит., доц. Н. Г. Петросян
Официальные оппоненты: докт. архит., проф. Л.В. Киракосян
канд.архит., доц. М.Ю. Игитханян

Ведущая организация: ОАО «Армпроект»

Защита состоится 26.11.25 г. 14:00 часов на заседании специализированного совета 029 - “Архитектура” КВОА РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении, по адресу: 0009, г. Ереван, ул. Теряна, 105.
С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра, 17/1.
С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am
Автореферат разослан 24.10. 25 г.
Ученый секретарь специализированного совета,

кандидат арх., асистент Д. С. Наатакян

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը նվիրված է Թեհրանի կենտրոնական հատվածում ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետանախագծային խնդիրներին, որոնք վերջին տասնամյակներում մեծ հնչեղություն ու արդիականություն են ձեռք բերել՝ գրավելով ոլորտի մասնագետների, հետազոտողների, քաղաքային իշխանությունների և համայնքային շրջանակների ուշադրությունը: Այսօրվա գլոբալացված աշխարհում ճարտարապետները բախվում են տեղական ինքնությունը միջազգային միտումների և ազդեցությունների հետ հավասարակշռելու մարտահրավերներին: Ուստի, ժամանակակից քաղաքաշինական նախագծման ընթացքում ինքնության պահպանումը չափազանց կարևոր է: Այն գերակա խնդիր է նաև ԻԻՀ մայրաքաղաքում:

Ատենախոսության թեման Թեհրանի ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետանախագծային հարցերի դիտարկումն է՝ 12-րդ վարչական շրջանի օրինակով, որը հանդիսանում է քաղաքի պատմական միջուկը՝ բովանդակելով ազգային մեծ արժեք ունեցող կառույցներ: Սրընթաց արդիականացումների արդյունքում այս շրջանում ծագել են խնդիրներ, որոնք սպառնում են վնասել կամ խեղաթյուրել տարածքի պատմական, մշակութային, սոցիալական ինքնությունը, չնայած որ տեղաբնակներն ու ակտիվիստները մշտապես հանդես են գալիս հօգուտ պատմական վայրերի, տեղական արվեստների ու մշակույթի խթանմանը և շրջանի թաղամասերի ինքնօրինակության պահպանությանը:

Ատենախոսության արդիականությունը. Վերջին տասնամյակներում քաղաքները զարգանալով ու վերափոխվելով վերածվել են բարդ համակարգերի, և ստեղծված պայմաններում քաղաքային նախագծողը թելադրողից վերածվել է քաղաքն անընդմեջ ուսումնասիրողի՝ վերլուծելով կառուցվածքային տարրերը: Դրանք առաջ են բերել քաղաքային բազմաթիվ խնդիրներ (սոցիալական, ֆիզիկական, տնտեսական)՝ հանգեցնելով ինչպես տեխնիկական ենթակառուցվածքից զուրկ անվերահսկելի միջավայրերի, այնպես էլ կենսունակ տարածքների և իմաստալից վայրերի առաջացմանը: Եվ քանի որ համայնքի կյանքի որակը պայմանավորված է կայունությամբ և ունի ֆիզիկական, տնտեսական և սոցիալական չափումներ, ապա քաղաքային կայուն ինքնությանը կարելի է հասնել նման տարածքների տնտեսական, սոցիալական և հատկապես ֆիզիկական կառուցվածքների ամրապնդմամբ, վերակենդանացմամբ և բարելավմամբ: Այս խնդիրը ոլորտի մասնագետներին մղում է մեթոդական ուսումնասիրությունների ու միջոցառումների մշակման: Սույն թեզի արդիականությունն ավելի է ընդգծվում, քանզի Թեհրանի քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանմանն առնչվող ճարտարապետանախագծային խնդիրների ուսումնասիրությունն ավելի է կարևորվել ներկայիս ուրբանիզացիայի համատեքստում: Թեհրանի պատմական թաղամասերը բախվում են լուրջ մարտահրավերների, քանի որ

արդիականությունը բախվում է պատմական ու մշակութային ինքնություններին: Ուստի այստեղ ինքնության պահպանումը չափազանց կարևոր է, հատկապես 12-րդ վարչական շրջանի նման ավանդական հատվածի առումով, որը նպաստում է մայրաքաղաքի իրական կերպարի պահպանմանը: Թեհրանը խոր վերափոխումների է ենթարկվել նաև բնակչության աճի, ժամանակակից ճարտարապետական ոճերի ներհոսքի, տնտեսական և այլ պատճառներով, որոնք ակներև են 12-րդ շրջանում՝ բարձրահարկերի զարգացումներով և ենթակառուցվածքների նախագծերով, որոնք հաճախ ստվերում են ավանդական շենքերը և հանրային տարածքները: Քաղաքային նման զարգացումները հանգեցնում են վայրի և ինքնության զգացողության թուլացմանը՝ առաջացնելով մտահոգություններ և՛ բնակիչների, և՛ նախագծողների շրջանում: Շարունակվող փոխակերպումները սպառնում են ոչ միայն ֆիզիկական կառուցվածքներին, այլև կոլեկտիվ հիշողությանն ու ինքնությանը: Սույն թեզը միտված է ուսումնասիրելու այս ծիրում առաջացող ճարտարապետանախագծային խնդիրները: Միաժամանակ, որոշումների կայացման գործընթացում հաշվի առնելով մասնակցային մոտեցման կարևորությունը, թեզի հիմքում դրվել է հենց բնակչության մոտեցումը քաղաքի ինքնության պահպանության խնդրին: Հետազոտության արդյունքները լույս են սփռում ապագա ճարտարապետական պրակտիկաների և քաղաքականության հարցերի վրա՝ քաղաքային ինքնության պահպանման առումով:

Ատենախոսության սահմանները. Ուսումնասիրությունն ընդգրկում է Թեհրանի վերջին 200 տարիների պատմական զարգացման, քաղաքաշինական մշակույթի ու ինքնատիպ ճարտարապետության ձևագոյացման փուլերը, հիմնականում ներառելով Իրանում Քաջարների (1779-1925) ու Փահլավիների (1925-1979) դինաստիական կառավարման շրջափուլերը, քաղաքի պատմության հետհեղափոխական (1979-1980) և արդի ժամանակաշրջանները: Հետազոտության առանցքում Թեհրանի պատմական 12-րդ վարչական շրջանն է՝ ձևագոյացած ու կառուցապատված նշված ժամանակաշրջաններում: Համեմատական վերլուծություններում ընդգրկվել են որոշ միջազգային քաղաքների հպանցիկ օրինակներ:

Ուսումնասիրության նպատակն է առաջադրել քաղաքային զարգացման տարբեր ժամանակաշրջանները ներկայացնող ինքնության ինտեգրման գործիքակազմ՝ պահպանելու, վերաարժեվորելու և վերստեղծելու պատմական քաղաքային լանդշաֆտը Թեհրանի պատմական հատվածում՝ առաջարկելով նոր և հին կառուցապատումների միջև ինտեգրման համապատասխան մոդել, որի միջոցով հնարավոր լինի ապահովել ընթացիկ քաղաքաշինական գործընթացների համապատասխանությունը կայուն զարգացման սկզբունքներին, բացառիկ դեպքերում՝ զգալի միջամտությունների նախատեսմամբ: Որպես իրավիճակային դեպք ընտրված 12-րդ վարչական շրջանի համակողմանի վերլուծության և իրատեսական առաջարկների առաջադրման օրինակով սույն աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրել, թե ինչպես կարող են ճարտարապետական նախագծման առաջարկվող ռազմավարություններն արդյունավետորեն պահպանել մշակութային ինքնությունը Թեհրանի պատմական

հատվածի ժամանակակից քաղաքային լանդշաֆտում: Սույն նպատակի համար առաջ են քաշվել հետևյալ **գիտական խնդիրները**.

1. Բնորոշել քաղաքային ինքնությունն ավանդական պատմական և արդի ճարտարապետության մեջ:

2.Կայուն քաղաքային լանդշաֆտի գնահատման և այն ավանդական քաղաքների հատկանիշներին համապատասխանացնելու և արդիական շարժումներին համընթաց թարմացնելու այլընտրանքային մոդել:

3. Վերհանել ճարտարապետական ինքնության շարունակականության վրա ազդող գործոնները՝ բացահայտելով հակասությունների և մարտահրավերների շղթան ժառանգության ու արդիականացման գործընթացների միջև:

4.Հետազոտության համար կազմակերպել հարցում՝ Լայկերտի սանդղակի վրա հիմնված հետադարձ կապի հարցաշարի միջոցով:

Ատենախոսության մեթոդաբանությունը հիմնված է համալիր համակարգված մեթոդի վրա: Կատարվել են քաղաքաշինական, պատմաճարտարապետական համեմատական վերլուծություններ, փաստագրական և որակական հետազոտություններ: Ինքնության պահպանման հիմնախնդիրը Թեհրանի պատմական 12-րդ շրջանում մշտապես ակտուալ է, հետևաբար ընտրված մեթոդաբանությունը հետամուտ է արժևորելու քաղաքի ֆիզիկական ինքնությունը՝ քաղաքային կայունության համատեքստում: Ուստի, համադրվում են տեսական նյութերի տվյալները, տեղազննման արդյունքների քննական վերլուծությունները: Առաջարկվում է կոնկրետ գործիքակազմ՝ թեմայի վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտելու, մշակելու և վերլուծելու համար: Տեսականորեն ներկայացնելով «քաղաքի ինքնություն» հասկացությունը, վերլուծվել են կայուն քաղաքային ցուցանիշները և քաղաքի ինքնության չափորոշիչները: Գործնականորեն, նախ ոլորտային ուսումնասիրության միջոցով վերլուծվել են Թեհրանի 12-րդ շրջանի կառուցվածքին առնչվող ֆիզիկական մի քանի բաղադրիչներ: Համաձայն արդյունքների 12-րդ շրջանն ունի ինքնատիպ բնութագրեր, այդ թվում՝ ֆիզիկական ինքնությունը, պատմական արժեքը, ներդաշնակությունը, միասնականությունն ու բովանդակությունը: Հետազոտության առնչությամբ իրանացվել է սոցիոլոգիական հարցում: Վերջնարդյունքում գնահատվել են հարցվածների ընկալումները՝ քաղաքային ինքնությունը ձևավորող գործոնների հարաբերական նշանակության վերաբերյալ:

Աշխատանքի գիտական նորույթը. Քաղաքային կայուն զարգացման ձևերին հասնելու ամենաարդյունավետ միջոցներից մեկը ֆիզիկական ինքնության բնութագրիչների և ավանդական քաղաքների թաքնված հատկանիշների կիրառումն է՝ արդի միտումներին նորովի համապատասխանեցնելու առումով (արդիականացում, վերաօգտագործում, ռեվիտալիզացիա): Սույն աշխատանքի գիտական նորույթն այն է, որ նախ հաշվի է առնվել քաղաքային միջավայրի որակի ապահովման մեջ ինքնության դերը, և հետո ներկայացվել են կայուն քաղաքային որոշ ընդհանուր ֆիզիկական ցուցանիշներ: Երկրորդ՝ Թեհրան քաղաքի 12-րդ վարչական շրջանի ինքնության գործոնների վերլուծությամբ պարզվել է, որ քաղաքաշինական իմաստով առաջանում են

բազմաթիվ միջավայրային խնդիրներ, որոնք սպառնում են քաղաքի պատմական հատվածի ֆիզիկական վնասմանը, մինչդեռ քաղաքի կայուն միջավայրի ինքնությունը կարելի է ստանալ նման տարածքների տնտեսական, սոցիալական և հատկապես ֆիզիկական կառուցվածքների ամրապնդմամբ, աշխուժացմամբ և որակական բարելավմամբ: Հետազոտությամբ մշակվել է քաղաքային կայունության գնահատման մեթոդ՝ հիմնված Թեհրանի ուրբանիզացիայի վրա: Նկատի է առնվել, որ քաղաքաշինությունը դինամիկ ոլորտ է՝ միտված բարելավելու կենսամիջավայրը ներկա և ապագա սերունդների համար: Հետևապես,

1. Այս թեզը առանձնանում է իր բազմաբովանդակ մոտեցմամբ՝ համատեղելով պատմաճարտարապետական վերլուծությունը, քաղաքային նախագծման տեսությունը և համայնքի ներգրավվածության ռազմավարությունները:

2. Առաջին անգամ օգտագործվել է հետազոտման համալիր համակարգված մեթոդ՝ ներառելով տեղական շահառուների հետ որակական հարցում, կառուցապատված միջավայրի տարածական բաղադրիչների վերլուծություն և ինքնությունը պահպանող հաջող նախաձեռնությունների դեպքերի ուսումնասիրություն:

3. Կատարված հետազոտությունը նպաստում է քաղաքաշինական նախագծման վերաբերյալ եղած գործնական պատկերացումների և առաջարկությունների ձևավորմանը, որոնք հարմարեցված են Թեհրանի յուրատիպ սոցիալ-մշակութային համատեքստին (տեղական պատմական նարատիվների և համայնքային արժեքների ինտեգրման կարևորությունը նախագծման պրակտիկայում)՝ պաշտպանելով քաղաքաշինության այնպիսի մոդել, որը գնահատում և արտացոլում է տեղաբնակների մշակութային ինքնությունը:

4. 12-րդ վարչական շրջանի օրինակը քննելիս, այս հետազոտությունն առաջարկում է համատեքստային ուսումնասիրություն, որն ընդգծում է պատմությամբ և մշակույթով հարուստ Թեհրան քաղաքում զարգացման և ժառանգության պահպանման նուրբ հավասարակշռությունը:

Թեմայի տեսական ու գործնական մշակվածությունը. Իրականացվել է գիտական աշխատանքների, արխիվային նյութերի տվյալների հավաքագրում, ինչպես նաև՝ դաշտային ուսումնասիրություն տեղում: Թեհրանի 12-րդ վարչական շրջանի բնական միջավայրում անմիջական դիտարկման միջոցով իրականացվել է տվյալների հավաքագրում, տեղազննման արդյունքների արձանագրում: Սույն մեթոդով պարզվել է քաղաքամասի ու կառուցապատված միջավայրի վիճակը: Կատարվել է տեսական և գործնական հետազոտությունների արդյունքում կուտակված տվյալների ընդհանրացում: Արհեստական բանականության միջոցով մշակվել են սցենարներ՝ իրատեսական պատկերի հիման վրա նկարագրելու քաղաքաշինական իրավիճակային փոփոխությունների ազդեցությունը ինքնության ընկալման ենթատեքստում:

Թեմայի ուսումնասիրությունը.Ներկայացվող աշխատանքի կտրվածքով ամբարված տեսական գրականությունը, արխիվային տվյալներն ու իրականացված պրակտիկ հետազոտությունների արդյունքները սինթեզվել են քննվող թեմայի շուրջ:

Ինքնության հասկացության ու տեսության, քաղաքային միջավայրի հետ բնակիչների հուզական ու հոգեբանական հարցերի կտրվածքով օգտակար է եղել Հ. Պրոշանսկու և այլոց հեղինակած «Տեղ-ինքնություն. «Ես»-ի ֆիզիկական աշխարհի սոցիալականացում» (1983) աշխատասիրությունը: Արժեքավոր է եղել Ք. Աբելի «Ճարտարապետություն և ինքնություն»-ը (2008), որը ճարտարապետությունը համարում է ինքնության հիմնական բնութագրիչներից մեկը: «Քաղաքի ճարտարապետությունը» (1984) գործը՝ Ա. Ռոսին քաղաքը դիտարկում է որպես տեղբնակների հավաքական հիշողության արգասիք: Մինչդեռ Ռ. Մ. Ֆելդմանը «Բնակավայր-Ինքնություն»-ում (1990) մարդու ինքնությունը կապում է տեղանքի ինքնության հետ՝ համարելով, որ քաղաքային ինքնության պահպանումը պահանջում է պատմական ճարտարապետության պահպանում և տեղական նարատիվների ու համայնքային արժեքների ճանաչում: Լ. Սանդերկոկի «Կոսմոպոլիս II. 21-րդ դարի խառնաշփոթ քաղաքները»-ում (2003) ընդգծվում է քաղաքային նախագծման մեջ համայնքի ներգրավվածության կարևորությունը: Մ. Թորաբիզադեն (2011) գտնում է, որ Թեհրանում գլոբալիզացիայի ճնշումների ֆոնին, հաճախ առաջնահերթությունը տրվում է միօրինակությանը, քան տեղական առանձնահատկություններին: Ֆ. Ֆազլփուրի և Մ. Իզադի «Քաղաքաշինությունը, ինքնությունը և ժառանգության պահպանման մարտահրավերները Թեհրանում» (2019) գործում նշվում է Թեհրանի ընդլայնման ու արդիականացման տեմպերի մասին, որոնք հանգեցրել են պատմական թաղամասերի և մշակութային վայրերի դեգրադացմանը: Մ. Նաղիզադեն «Ինքնությունը իրանական ավանդական և արդի ճարտարապետության միջև» (2007) քննարկում է նախագծերը, որոնք նկատի են առնում տեղական պայմաններն ու մշակութային պրակտիկաները, որոնք նպաստում են միջավայրի կայունությանը՝ պահպանելով անցյալի հետ երկխոսությունը: Հ. Մահմուդինեջադը և այլոք «Քաղաքային միջավայրի ֆենոմենոլոգիա» (2008) հոդվածում անդրադառնում են այն որակներին ու բնութագրերին, որոնք պետք է պայմաններ ապահովեն քաղաքի ֆիզիկական կառուցվածքի շարունակականության ապահովման գործընթացում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը. Ուսումնասիրությունն անհրաժեշտ է թեմայով զբաղվող իրանցի մասնագետների, իրանական քաղաքներում գործող պետական և մասնավոր կառույցների, անհատ հետազոտողների համար: Ստացված արդյունքներն արժեքավոր են քաղաքաշինարարների ու նախագծողների համար՝ դրանք քաղաքային վերանորոգումների, վերականգնումների, ճարտա-րապետական ու քաղաքաշինական գործնականում կիրառելի նախագծերում ներդնելու առումով: Ատենախոսության դրույթները հրատարակվել են հոդվածների ձևով (ԻԻՀ-ում, ՀՀ-ում, ՌԴ-ում, Եվրոպայում, Հնդկաստանում, Չինաստանում):

Ատենախոսության կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է 149 տեքստային էջից, որն ընդգրկում է ներածությունը, հաջորդող երեք գլուխները՝ համապատասխան եզրակացություններով, ընդհանուր եզրակացությունները, թեմայի հետ կապված 84 անուն օգտագործած գրականության ու հրատարակությունների

ցանկից, ինչպես նաև՝ լուսանկարներ, քարտեզներ, դիագրամներ, աղյուսակներ պարունակող հավելվածից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում տրվել են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, հետազոտման մեթոդիկան, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, հրատարակումները, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

ԳԼՈՒԽ Ի՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԵՀՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔԻ, ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Գլուխը բովանդակությամբ տեղեկատվական բնույթի է, որը ներկայացնում է Թեհրանի լանդշաֆտը, աշխարհագրական առանձնահատկությունները, պատմական զարգացման ու ճարտարապետական ժառանգության ձևագոյացման հանգամանքները, քաղաքաշինական համատեքստն ու դրա արդի վիճակը, կառուցապատված միջավայրում առկա խնդիրները, ինչպես նաև պատմական կենտրոնների շուրջ առաջացած մարտահրավերները, պահպանության հրատապությունը, քաղաքի պաթոլոգիական հիմնախնդիրները և այլն:

Իրանական բարձրավանդակի վրա տեղակայված ԻԻՀ մայրաքաղաք Թեհրանն իր պատմամշակութային, ճարտարապետական ու գեղարվեստական ժառանգությամբ և քաղաքաշինական ավանդույթներով համարվում է աշխարհի ուշագրավ բնակավայրերից մեկը: Աշխարհագրորեն ձևագոյացել է Էլբուրզ լեռնաշղթայի հարավային զառիթափ լանջերին, և ի սկզբանե զարգացել է բնական լանդշաֆտին համահունչ, սակայն աստիճանաբար ուրբանիզացվելով՝ առաջ է բերել այլ պատկեր: Թեև որպես բնակավայր այն հիմնադրվել է դարեր առաջ (մոտ 9-րդ դ.), բայց վերածվել է մայրաքաղաքի միայն 18-րդ դարում՝ Քաջարական դինաստիայի հիմնադիր Աղա Մոհամմադ Խանի (1789–1797) օրոք՝ ենթարկվելով լայնածավալ քաղաքային զարգացումների և ինտենսիվ կառուցապատման: Թեհրանի ճարտարապետական ու քաղաքաշինական զարգացման առաջին փուլը մեկնարկել է հենց Քաջարների օրոք (1795-1925)՝ Իրանի և Եվրոպայի միջև դիվանագիտական հարաբերությունների սկզբնավորմամբ, ինչն իր ակնհայտ դրսևորումն է գտել տարբեր շենքերի նախագծման մեջ (օր.՝ Գոլեստանի պալատական համալիրը): Քաջարական մշակույթը ցայսօր մնացել է գերիշխող՝ որպես ազգային, վերնակույլար ճարտարապետության դրսևորում:

Փահլավիների դինաստիական իշխանության օրոք (1925-1979) քաղաքը ենթարկվել է վերափոխումների: Թեհրանի ճարտարապետական համապատկերում ձևագոյացել են Սաադաբադ պալատական համալիրի Սպիտակ շենքը, Նիավարանի պալատական համալիրի մի քանի կառույցներ և այլն, որոնցում համադրվել են ավանդական իրանական տարրերն ու եվրոպական ներմուծված ոճերը: Այս շրջանում գործող ճարտարապետներն ու նախագծողները հաջողությամբ են համատեղել

ժամանակակից ճարտարապետությունը տեղական շինարվեստի հետ: Իրապես, Փահլավիները կարևոր դեր են խաղացել քաղաքային ու միջավայրաստեղծ ծրագրերի իրականացման գործում, քաղաքն արդիականացել ու նորովի է ձևակերտվել: Արևմտյան ճարտարապետներն առաջին անգամ նախագծել են նոր շենքեր, իսկ վերակառուցման նախագծերն իրականացվել են շատ բարձր տեմպերով: Հենց այդ ժամանակ էլ մտահղացվել են Ազադի և Միլադ հոյակերտ աշտարակները: Հեղափոխությունից (1979) հետո խնդիրներ են ծագել ավանդույթի և արդիականության միջև (մշակութային, ազգային ու կրոնական իդեալների վերաբերյալ): Իսլամական ինքնություն ստեղծելու փորձերը մտահոգության առիթ են դարձել նաև հեղափոխությունից հետո և հատկապես 1990-ականներին: Հետհեղափոխական շրջանի առաջին տասնամյակների (1979-1997) վերափոխումները թեև իրականացվում էին պետության անմիջական միջամտությամբ, բայց չնայած վերջինիս ավանդական բնույթին, այնուհանդերձ դրանք ընթանում էին անվերահսկելի զարգացման ու արդիականացման մշտական ցանկությամբ:

Այսպիսով՝ 18-19-րդ դդ. Թեհրանի պատմական էվոլյուցիան ի ցույց է դնում համեստ բնակավայրի նշանակալի փոխակերպումը ծաղկուն մայրաքաղաքի՝ արևմտյան ճարտարապետական ոճերի և քաղաքաշինական սկզբունքների՝ ավանդական և մոդեռնիստական ազդեցությունների միախառնմամբ: 19-20-րդ դդ. նույնպես արտացոլվում է դինամիկ երկխոսությամբ՝ Թեհրանի հարուստ մշակութային ժառանգության և արևմտյան արդիականացման շարժումների (նոր ոճեր ու տեխնոլոգիաներ) ու ազդեցությունների միջև (Թուփխանեհի ու Հասանաբադի հրապարակները այս միտման լավագույն օրինակներն են հանդիսանում): 20-րդ դ. ճարտարապետական լանդշաֆտը զգալիորեն զարգանում էր, ճարտարապետներն ու նախագծողները զբաղված էին վերահմաստավորելու քաղաքային տարածքները, որոնք ընդգծում էին ֆունկցիոնալությունն ու ռացիոնալիզմը: Այս էվոլյուցիան դարձավ ավելի լայն մշակութային պայքարի խորհրդանիշ, երբ իրանցին բախվեց ինքնության, ազգայնականության և գլոբալիզացիայի ազդեցության հետ: Մինչ որոշ շենքեր դրսևորում էին պատմական ժառանգությունը, մյուսները մարմնավորում էին մոդեռնիստական իդեալները՝ ստեղծելով ոճերի խճանկար, որն արտացոլում էր անցյալի ու ներկայի միջև և՛ փոխազդեցությունը, և՛ լարվածությունը: Այս ճարտարապետական երկխոսությունը, ի վերջո, ձևավորեց Թեհրանի քաղաքային ինքնությունը: Ճարտարապետությունն այստեղ էկլեկտիկ է, մինչ բազմաթիվ շենքեր արտացոլում են մոդեռնիստական ոճը, մյուսները ցուցադրում են պոստմոդեռն, նեոդասական և ավանդական իրանական ոճերը: Դրանք աչքի են ընկնում ձևի պարզությամբ, իսկ հարդարանքը և հաճախ նրբորեն արված տարբերակիչ համամասնությունները դիտարժան են: Զարդաքանդակ կամարների, «մողարնասի» կիրառումը գմբեթատակերում, մզկիթներում, և «մուշրաբիեի» (արհեստական պատուհան) ներդնումը ճարտարապետության մեջ, հիրավի ուշագրավ են:

20-րդ դ. Թեհրանը զգալի վերափոխումների է ենթարկվել քաղաքաշինական առումով: Քաջարների և Փահլավիների օրոք կազմված քարտեզների

ուսումնասիրությունը երևան է բերում բնակելի շենքերով կառուցապատման և տարբեր քաղաքաշինական վերափոխումների դրսևորումները: 1970-1986 թթ. քաղաքն ընդլայնվել է դեպի հարավ և հյուսիս, իսկ 1990-ի սկզբներին՝ դեպի հյուսիս-արևմուտք և հյուսիս-արևելք: Ըստ էության մեծ ջանքեր են գործադրվել արդիականացման ուղղությամբ, ինչը հանգեցրել է իրանական ավանդական տարրերի և արևմտյան ճարտարապետական ազդեցությունների համադրությամբ լայնածավալ քաղաքաշինական նախագծերի իրականացմանը (օր.՝ Վալիասր պողոտան և այլն): Այդուհանդերձ, քաղաքի զարգացումը բնութագրվում է գեղագիտության և ֆունկցիոնալության շեշտադրմամբ, որի արդյունքում ստեղծվել են նաև այգիներ ու հանրային տարածքներ, որոնք ինտեգրում են բնությունը քաղաքային միջավայրում:

Թեհրանն ունի բարդ տարածական կառուցվածք, որն արտացոլում է նրա պատմական և ժամանակակից զարգացումները: Այն կազմակերպված է կենտրոնական միջուկի շուրջ՝ առևտրային և վարչական շրջաններով ձևավորված տարածքում: Հատակագծային հորինվածքի առումով քաղաքի կառուցվածքը նշանավորվում է կենտրոն-ծայրամաս հստակ տարբերությամբ: Հին միջուկը՝ հին շենքերով կազմում է քաղաքի մի փոքր հատվածը: Գործարարության և ծառայությունների մի մասը հին միջուկում և նրա հյուսիսային ընդլայնման մեջ է: Միջուկի շուրջը դասավորված են բնակելի տարածքները: Բնակելի ավանդական տարածքները՝ ոլորուն նեղ փողոցներով ու փակուղիներով՝ ձգվում են դեպի կենտրոնական բակի շուրջը դասավորված մեկ կամ երկհարկանի շենքերի հատվածը: Ի հակադրություն դրա, նոր ձևավորված բնակելի տարածքներն ունեն լայն, ուղիղ փողոցներ, տարբեր բարձրության ու տպավորիչ արտաքին հարդարմամբ պարսպապատ բակերով շենքեր:

Ներկայումս Թեհրանի տարածական ընդարձակումը զգալիորեն փոխակերպել է աշխարհագրական լանդշաֆտը և այն բնութագրվում է քաղաքաշինության և բնական միջավայրի միջև վառ հակադրությամբ: Քաղաքն առանձնանում է ժամանակակից ենթակառուցվածքներով, բարձրահարկ շենքերով, լայն պողոտաներով, պատմական թաղամասերով, կանաչ տարածքներով: Քաղաքաշինական միջավայրի ուսումնասիրությունից պարզվում է, որ վերջին տասնամյակներում քաղաքի աստիճանական ընդարձակումը, հատկապես դեպի հարավ և արևմուտք, կլանել է մերձակա գյուղերն ու արբանյակային քաղաքները: Քաղաքային կառուցվածքի կարևոր առանձնահատկությունը դրա առանցքներն են: Հյուսիս-հարավ կողմնորոշում ունեցող մի շարք փողոցներով ձևավորված հիմնական առանցքը հարավի կենտրոնը միացնում է քաղաքի ամենահյուսիսային հատվածին: Անշուշտ հողի արժեքը բարձր է հյուսիս-հարավ առանցքի երկայնքով, և քաղաքային շատ ծառայություններ ու հարմարություններ կենտրոնացված են հենց այստեղ: Երկրորդական առանցքը սահմանվում է Էնքելաբ փողոցով, ձգվում է արևելքից արևմուտք՝ հատելով հիմնական առանցքը ուղիղ անկյան տակ: Այս երկու առանցքների երկայնքում ձևավորված գլխավոր հրապարակները համարվում են քաղաքի ամենակարևոր կիզակետերը՝ ներառելով հյուրանոցները, դեսպանատները և թանգարանները, ի լրումն մի շարք

այգիների և կանաչ տարածքների: Այս առանցքը մեծ մասամբ արդյունք է կենտրոն-ծայրամաս և հյուսիս-հարավ բաժանումների միջև փոխկապակցվածության:

Այժմ Թեհրանը բախվում է մարտահրավերների՝ քաղաքային աճը տարբեր ֆիզիկական լանդշաֆտի շրջանակներում կառավարելիս: Արդյունքում՝ որոշ պատմական շենքեր տուժում են շինարարության և ընդարձակման գործընթացների հետևանքով: Իրանի տարբեր մասերից բնակչության մեծ ներհոսքը դեպի Թեհրան նույնպես նպաստել է քաղաքատարածության ընդլայնմանը, որի արդյունքում՝ 1991թ. մայրաքաղաքի 20 վարչական շրջաններին ավելացվել են 21-րդն ու 22-րդը, որոնք փոխել են քաղաքի երկրաչափական պատկերը՝ վերածելով այն եռանկյունու: 1996 թ. ևս Թեհրանի սահմաններն ընդլայնվել են: Այս ընթացքի քաղաքաշինական նախագծերը նպատակամիտված էին վերահսկելու կառուցապատման ու շինարարության ընթացքը, ներքին միջավայրային հարցերի կազմակերպումը: 2001թ. երևան եկավ «Մեծ Թեհրանի» քաղաքային նախագիծը, որն ընդգրկում էր բուն քաղաքն ու դրա շրջակայքի կառուցապատված տարածքները, որը վերջնականորեն ամբողջացվեց 2006թ.:

Ներկայումս վարչական առումով Թեհրանը բաժանված է 22 շրջանների և 122 ենթաշրջանների, որոնք իրենց առանձին թաղամասերով մեծապես տարբերվում են սոցիալ-տնտեսական պայմաններով և ճարտարապետական ոճերով: Սույն բաժանումները կատարվել են՝ նկատի առնելով տեղանքի աշխարհագրությունը, կոնկրետ կարիքները, պայմաններն ու համատեքստերը: Վարչական շրջաններում առկա է բնակչության խտության տարբերություն: Ժողովրդագրական առումով Թեհրանը երիտասարդ, բայց խիտ բնակեցված մայրաքաղաք է, ուր մոտ 9 մլն հաշվվում է բուն քաղաքում և ավելի քան 15 մլն՝ ավելի մեծ ագլոմերացիայի կտրվածքով:

Թեհրանը համարվում է ԻԻՀ տնտեսական կենտրոնը, ուր տեղակայված է ողջ երկրի արդյունաբերության գրեթե կեսը: Քաղաքն ունի լավ զարգացած վարչական ու սոցիալական ծառայություններ ու ենթակառուցվածքներ (առողջապահական, կրթական, մշակութային և այլն): Այն Իրանի տրանսպորտային ցանցի կիզակետն է՝ հանրային ու մասնավոր տրանսպորտային ցանցով (նաև խցանումների), ուր ցանկացած տեղաշարժ կանխորոշվում է ըստ քաղաքային երթևեկության գոտիների:

Այսօր էլ Թհրանը շարունակաբար ընդլայնվում է՝ միախառնելով ավանդույթը արդիականության և կրոնական պատկերումների զուգորդումը աշխարհիկ կենսապայմանների հետ: Լինելով կենսունակ մշակութային և տնտեսական հանգույց, այն շարունակում է մնալ հակադրությունների քաղաք՝ միատեղելով ավանդական ու ժամանակակից ճարտարապետությունը: Ճարտարապետական ու քաղաքաշինական այս դինամիկ էվոլյուցիան ի ցույց է դնում է Թեհրանի ճկունությունն ու կողմնորոշվելու հնարավորությունը ժամանակակից ուրբանիզմի բարդությունների մեջ: Ներկայիս քաղաքաշինական վիճակը ակներև է դարձնում նրանում նորակառույց թաղամասերի ճարտարապետական ու քաղաքաշինական անհավասար զարգացման պատկերը: Այնուհանդերձ, ժամանակակից քաղաքային լանդշաֆտի ձևավորումը Թեհրանի կենտրոնում ուշագրավ է՝ ի դեմս պատմականորեն ձևագոյացած թաղամասերի և

ժամանակակից զարգացումների հետաքրքրաշարժ համադրության, որը ստեղծում է աշխույժ մթնոլորտ՝ գրավելով և՛ տեղացիներին, և՛ զբոսաշրջիկներին: Քանի դեռ քաղաքն ընդլայնվում է, զարգացումը ժառանգության պահպանման հետ հավասարակշռելու ջանքերը մնում են վճռորոշ՝ պատմական կենտրոնի ինքնությունը պահպանելու տեսանկյունից, որը հատկապես ակնհայտ է 12-րդ վարչական շրջանում:

ԳԼՈՒԽ II. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԹԵՀՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (տեսական շրջանակ)

Երկրորդ գլխում տեսականորեն ներկայացվում է ինքնության կոնցեպտը ճարտարապետության ու քաղաքաշինության համատեքստում, ինչպես նաև պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները այժմյան Թեհրանի քաղաքային լանդշաֆտում: Որպես մարդակենտրոն միջավայրեր, քաղաքները ձևավորվում են հոգևոր, նյութական, սոցիալական ու քաղաքական պայմաններում և գտնվում մշտական փոփոխության մեջ: Փոխվում են համայնքները, բնակիչների արժեհամակարգերն ու աշխարհայացքները, որոնք ձևավորում են ժամանակային շերտեր՝ ներկայացվելով քաղաքի ֆիզիկական կառուցվածքում նյութական իրականությամբ: Ըստ էության, քաղաքը կուտակային իրականություն է տարածության և ժամանակի մեջ: Ուստի, գոյացած ժամանակային շերտերի ըմբռնումը կարևոր է՝ քաղաքը հասկանալու և նրա ինքնությունը զգալու համար: Խնդիրներ են սկսվում, երբ քաղաքի տարածական կառուցվածքում ինչ-որ բան սխալ է ընթանում, ինչը հանգեցնում է քաղաքի բնութագրերի կորստին՝ բացասաբար անդրադառնալով քաղաքային ինքնության վրա, որն արտացոլում է քաղաքի ֆիզիկական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները: Կառուցապատված միջավայրը, տնտեսական ու մշակութային գործունեությունը և սոցիալական փոխազդեցությունները բոլորն էլ դեր են խաղում դրա ձևավորման գործում: Ինքնության կորուստը վնասարար է քաղաքների և դրանց օգտագործողների համար: Քաղաքների և դրանց տարածքների նախագծման որակը կարևոր է, որը կարող է խոր ազդեցություն ունենալ հասարակության կյանքի որակի վրա՝ առաջացնելով հպարտության ու կապվածության զգացում, իսկ քաղաք այցելողների վրա թողնել առավել լավորակ սոցիալական կառուցվածքի տպավորություն:

Փաստորեն, ինքնությունը ոչ միայն բարդ ֆենոմեն է, այլև քաղաքային կայունությանը հասնելու ամենակարևոր գործոնը: Քաղաքներն ունեն ավանդական ու ժամանակակից արժեքներ, որոնց միջև պետք է լինի առողջ հավասարակշռություն, և մեկը չպետք է կորչի հանուն մյուսի: Սա քաղաքաշինության նպատակներից մեկն է, որին պետք է հետամուտ լինեն նախագծողներն ու պլանավորողները որոշակի միջավայր նախագծելիս՝ տրամադրելով միջավայրային ճշգրիտ կոորդինատներ:Մինչդեռ օտարամուտ ձևերի անսխալ կրկնօրինակումը ամենազգայուն հանգամանքներից է, որը կարող է հանգեցնել համայնքի ինքնության ճգնաժամի կամ այլ կերպ ասած՝ ազգային

մշակույթից առանձնացված ինքնության փնտրտուքի: Հետևաբար, պետք է ձգտել հավասարակշռել նորարարությունը ավանդույթի հետ՝ ստեղծելով միջավայրեր, որոնք կարձագանքեն քաղաքային լանդշաֆտի և նրա բնակիչների ինքնությանը:

Ինքնության պահպանման խնդիրը իրանական քաղաքների պարագայում առավել ակնառու է, հատկապես պատմական կենտրոններում, որոնք ունեն ինքնօրինակ առանձնահատկություններ ու ավանդական չափանիշներ՝ մշակութային ժառանգությունը, տարածական կազմակերպումը, միջավայրային ինտեգրումը, համայնքի համախմբումը: Ուստի քաղաքային կայուն ցուցիչների և իրանական քաղաքային ինքնության ավանդական չափանիշների միջև համահունչությունը համակարգված կերպով գնահատելու համար կարելի է կիրառել վերլուծական մեթոդներ, որոնք կօգնեն գնահատելու վիճակը և առաջարկելու միջամտություններ, որոնք հարգում են և՛ միջավայրի կայունությունը, և՛ մշակութային ինքնությունը՝ օգնելով քաղաքային նախագծողներին ստեղծել էկոլոգիապես որակյալ միջավայրեր:

Վերաբերյալ Թեհրանին, նրա բնակիչների համար այն ավանդական, պատմամշակութային քաղաք է, որի ձևագոյացմանն օժանդակել են բազում ստեղծագործ մեթոդներով: Պայմանավորված հատկապես 12-րդ վարչական շրջանում տեղակայված տարբեր ժամանակաշրջաններով թվագրվող հին ճարտարապետական հուշարձաններով, ինքնության պահպանման հիմնախնդիրն այստեղ հրատապ է: Ուստի, քաղաքային ինքնության մեջ ճարտարապետության դիտարկումը որպես առանցքային դերակատար ոչ միայն գեղագիտության մասին է, այլ միահյուսված է բնիկ թեհրանցիների հավաքական հիշողության, արժեքների և ձգտումների հետ: Պատմական համատեքստի ու պատմամշակութային ժառանգության առումով Թեհրանի ճարտարապետությունը մեծապես խարսխված է իրանական ավանդույթների վրա՝ Իրանում կառավարած տարբեր դինաստիաների ազդեցություններով հանդերձ (Սեֆյաններ, Զանդիներ, Քաջարներ, Փահլավիներ): Ոճերը, նյութերը և նախագծման տարրերը նշանավորում են պատմական համատեքստը և մշակութային ազդեցությունները, որոնք ձևավորել են սույն քաղաքը: Մինչդեռ ժամանակակից ճարտարապետական ձևակերտվածքներն արտահայտում են նորարարության և հարմարվողականության շունչը, որն ակնառու է քաղաքի կերպարում: Սոցիալական կառուցվածքի առումով ակնառու է բնակելի շենքերի ու թաղամասերի նախագծումը՝ ավանդական տներից մինչև ժամանակակից բազմաբնակարան համալիրներ, որոնք արտացոլում են քաղաքի սոցիալական դինամիկան և ժողովրդագրական փոփոխությունները: Հեռավոր շրջաններից իրանցիների շարունակական միգրացիան դեպի Թեհրան ազդել է բնակարանային ոճերի վրա և նպաստել քաղաքային տարբեր ինքնության ձևավորմանը: Գլոբալիզացիայի միտումների ազդեցությունը նույնպես ակնառու են Թեհրանում՝ ի դեմս երկնաքերերի և ժամանակակից համալիրների, որոնք ներկայացնում են տեղական ու միջազգային ոճերի միաձուլումը: Ստեղծված պատկերը ձևավորում է քաղաքի ընկալումը ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային մակարդակով, թեև գլոբալիզացիայի ճնշումներով պայմանավորված, հաճախ

առաջնահերթությունը տրվում է միօրինակությանը, քան տեղական առանձնահատկություններին: Այնուհանդերձ, ճարտարապետությունը լինելով քաղաքային ինքնության հիմնարար բաղադրիչ, կամրջում է անցյալն ու ներկան: Եվ քանի դեռ Թեհրանը շարունակում է արդիականանալ և վերափոխվել, ճարտարապետական լանդշաֆտը մշտապես կմնա քաղաքային ինքնության ձևավորման առանցքային դերակատար ապագա սերունդների համար:

Քաղաքաշինական բաղադրիչի ազդեցությունը Թեհրանի ինքնության ձևավորման վրա նույնպես զգալի նշանակություն ունի: Վերջին տասնամյակների ընթացքում Թեհրանը սրընթաց և բուռն քաղաքային զարգացում է ապրել՝ մարտահրավեր նետելով քաղաքի ինքնությանը՝ ժամանակակից ուրբանիզացիայի կտորվածքով: Ու քանի դեռ այն շարունակում է զարգանալ գլոբալ համատեքստում, տարածքն ընդլայնվում է, բնակչությունն աճում է, նոր ենթակառուցվածքների, առևտրային զարգացումների և բնակելի նախագծերի պրոգրեսը ավելի է սպառնում պատմական հյուսվածքին: Թեհրանի քաղաքաշինությունը հաճախ առաջնահերթություն է տալիս տնտեսական աճին ու զարգացմանը, քան ժառանգության պահպանմանը: Երկնաքերերն ու ժամանակակից համալիրները ձևագոյանում են երբեմն հենց պատմական վայրերի հաշվին, ինչը հանգեցնում է տեղական համայնքների ինքնության կորստին: Ակտիվիստները, ճարտարապետները և համայնքի անդամները մշտապես բարձրաձայնում են իրենց մտահոգությունները՝ հօգուտ հավասարակշռված մոտեցման, որը կհարգի Թեհրանի պատմական կերպարը՝ միաժամանակ բավարարելով նրա աճող բնակչության կարիքները: Հասարակական տրամադրություններն հիրավի վճռորոշ դեր են խաղում այս շարունակվող դիսկուրսի մեջ՝ հորդորելով քաղաքականություն մշակողներին հաշվի առնել արդիականացման զարգացումների երկարաժամկետ ազդեցությունը համայնքի ինքնության վրա: Նման ակտիվությունն ընդգծում է թեհրանաբնակների աճող գիտակցությունը առ այն, որ Թեհրանի ինքնատիպ բնույթը ոչ միայն որոշվում է նրա ուրվապատկերով, այլ նրա փողոցներում և կառույցներում ներկառուցված պատմություններով, փոխազդեցություններով և հիշողություններով: Ըստ էության, Թեհրանի ինքնության ապագան կախված է նրա պատմական անցյալի պահպանման և քաղաքաշինության անխուսափելիությունն ընդունելու միջև նուրբ հավասարակշռություն հաստատելուց: Այս մոտեցումը կարող է երաշխիք ապահովել՝ թույլ տալով և՛ պատմականին, և՛ ժամանակակիցին ներդաշնակորեն գոյակցել:

Այսպիսով՝ իրանական ճարտարապետությունը ներկայացնելով ավանդույթների ու դարավոր փորձի մեծ բազմազանություն՝ ձևավորել է քաղաքների ճարտարապետական ուրույն դիմագիծը, ինչպես կառուցվածքային՝ ձևի ու ծավալի ընդգծված զգացողությամբ, այնպես էլ գեղագիտական առումներով (կամարներ, գմբեթներ, նրբաճաշակ հարդարանք), որը հանդիսանում է նրա ինքնության մի մասը: Ուշագրավ է իրանական ավանդական քաղաքների տեղադիրքը բնական լանդշաֆտում, բովանդակալից կառուցվածքով, կերպարայնությունը՝ ինքնության ընդգծված

արտահայտությամբ: Թեհրանի կառուցապատված միջավայրում կայունության որակի նման չափումներն ակնհայտ են, ուստի ավանդական կառույցները, հին թաղամասերը, և քաղաքային տարածքները՝ որպես քաղաքի հին հյուսվածքի հանգուցային կետերի կազմավորման ստեղծարար տարրեր, վերականգնելու և պաշտպանելու ջանքերը վճռորոշ նշանակություն ունեն նրա ինքնության և պատմության պահպանման համար: Մյուս կողմից, Թեհրանում քաղաքաշինական և ճարտարապետական նոր նախագծեր իրականացնելիս, ինքնության պահպանման գործիքները կարևոր նշանակություն ունեն քաղաքի յուրահատուկ բնույթը և մշակութային ժառանգությունը պահպանելու համար. հարմարվողական վերաօգտագործումը, ճակատների վերականգնումը՝ օգտագործելով ավանդական նյութերն ու տեխնիկան, գոտիավորման կանոնակարգը կանոնակարգելու նոր շինարարության ներդաշնակեցումը առկա ճարտարապետական համատեքստին: Փաստորեն, օգտագործելով ինքնության պահպանման այս գործիքները, քաղաքաշինարարներն ու ճարտարապետները կարող են արժևորելով շեշտադրել հին քաղաքի ինքնության դրական դերը, քաղաքի հարուստ պատմությունն ու ժառանգությունը՝ միաժամանակ խթանելով կայուն քաղաքային զարգացումը, հատկապես որ Թեհրանն արագ աճող քաղաքների թվին է պատկանում, որը գտնվում է քանդման ու վերակառուցման ազդեցությունների ներքո:

ԳԼՈՒԽ III. ԹԵՀՐԱՆԻ 12-ՐԴ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՁԵՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Գլխում ներկայացվում է Թեհրանի պատմական շենքերով կառուցապատված 12-րդ վարչական շրջանը, ուր ինքնության պահպանման համատեքստում դիտարկվում է քաղաքաշինական առանձին բաղադրիչների դերը, պահպանման, վերակառուցման կամ հարմարվողական վերաօգտագործման նշանակությունը ճարտարապետական ժառանգության շարունակականության ապահովման գործընթացում: Առաջադրվում է չափորոշիչների համակարգ՝ քաղաքաշինական հետագա միջամտությունները ձևավորված միջավայրում ներդաշնակորեն ինտեգրելու, առանց խաթարելու քաղաքային ինքնությունը:

Պատմական քաղաքներում ակնառու է ինքնության դերի կարևորությունը բնակավայրի զարգացման գործընթացում. կոլեկտիվ հիշողությունը և մշակութային ժառանգությունն ազդում են քաղաքային զարգացման, համայնքի ներգրավման և նախագծման պրակտիկայի վրա: Մյուս կողմից՝ միջազգային փորձի ուսումնասիրումը, միջազգային խարտիաները, կանոնադրություններն ու կազմակերպությունները, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն և Համաշխարհային ժառանգության կոնվենցիաները, ՄԱԿ-ի, ԻԿՈՄՈՍ-ի դրույթները տրամադրում են շրջանակներ և ուղեցույցներ՝ մշակութային ինքնությունները պահպանելու և բնակավայրերի զարգացումը պատասխանատու կերպով խթանելու համար: Անտարակույս, պատմական թաղամասերն ակտիվ դեր են խաղում քաղաքների եզակիությունը պահպանելու գործում և՛ ներկայում, և՛ ապագայում՝

կիրառելով միջամտությունների պատշաճ տեսակներ՝ վերանորոգում, պահպանություն, կայունացում, վերականգնում, վերակառուցում, փոխարինում, ռեաբիլիտացիա, ռեգեներացիա: Ճարտարապետների, քաղաքաշինարարների, նախագծողների, քաղաքային բնակավայրերի ապագայի հարցերով զբաղվող պատասխանատուների համար մարտահրավեր է ճանաչել քաղաքային ինքնության կարևորությունը գլոբալ աշխարհում և ամրապնդել դրա կայունությանն ուղղված քաղաքականությունը:

Դիտարկելով Թեհրանի 12-րդ վարչական շրջանի (հայտնի է նաև «Բահարեստան» անունով) ձևակազմությունն ու էվոլյուցիան, պատմական և քաղաքաշինական զարգացումը, կառուցապատված միջավայրի շրջանակը, քաղաքաշինական կառուցվածքը, զարգացման ընթացքն ու պահպանությանը հարցերը, հետազոտվել են ճարտարապետական բնութագրերը, տեղական իրանական պատմական ճարտարապետական ոճերը, ժամանակակից նախագծման միտումները, նշանավոր շենքերն ու տարածքները: Սոցիոլոգիական հարցման միջոցով բացահայտվել են ճարտարապետական ինքնության համայնքի ընկալումները, նպատակ է դրվել գոտիավորման ուղեցույցների միջոցով բարելավել քաղաքային ինքնության կառավարումը և ճարտարապետական բազմազանության պահպանումը, դրանով իսկ նպաստելով 12-րդ վարչական շրջանում ավելի միասնական և մշակութային առումով կենսունակ քաղաքային լանդշաֆտի ձևավորմանը: Այս շրջանը քաղաքի պատմական միջուկն է՝ ինքնատիպ ու շքեղ պատմամշակութային շենքերով, գրավիչ զբոսավայրերով, հրապարակներով. *Գոլեստանի պալատը, Մեծ բազարը, Մասուդիեհ պալատը, Սեպահսալար մզկիթը, Իրանի Ազգային և էրբաթ թանգարանները, Շահր և Նեգյարեստան զբոսայգիները, Հասանաբադ և Թուփխանեյե հրապարակները, բնակելի ապարանքներ, հանրային բաղնիքներ, իջևանատներ և այլ կառույցներ*:

Այժմ 12-րդ վարչական շրջանը ներկայացնում է պատմական նշանակության և ժամանակակից քաղաքաշինության յուրատիպ խառնուրդ, մի ուշագրավ ճարտարապետական լանդշաֆտ՝ իրանական ավանդական ճարտարապետության և ժամանակակից քաղաքաշինության համադրմամբ: Վերջին տարիներին այն զգալի վերափոխումների է ենթարկվել՝ բնակչության աճի և արդիականացման միտումներին հարմարեցնելու նպատակով: Արդյունքում՝ նոր շինարարությունները և ենթակառուցվածքային ծրագրերը հաճախ անտեսում են տեղական ժառանգության և համայնքի կարիքները՝ տնտեսական օգուտները գերադասելով մշակութային արժեքներից: Մյուս կողմից ժողովրդագրական փոփոխություններն են, քանզի 12-րդ շրջանում ապրում են տարբեր էթնիկ, կրոնական և սոցիալական խմբեր: Այս խնդիրները պահանջում են համապարփակ ռազմավարական լուծումներ: Միևնույն ժամանակ, Թեհրանի քաղաքապետարանի նախագծային քաղաքականության փաստաթղթերում բացակայում են 12-րդ պատմական շրջանի ճարտարապետական ոճերի պլանավորման և վերահսկողական տարրերի համապարփակ և հստակ նկարագրությունները: Այս իրավիճակը քաղաքաշինության և կառավարման մարմինների կողմից ճարտարապետական նախագծերի հաստատման ուղեցույց սկզբունքների և դրանց վրա

հիմնված հստակ չափանիշների բացակայության արդյունք է: Ուստի, այս խնդիրները լուծելու համար առաջարկվում է «վարչական շրջանի տարաբաժանման, հատակագծային միավորների դասակարգման և համապարփակ գնահատման» հիման վրա քաղաքային լանդշաֆտի կառավարման ռազմավարությունների մշակում և առաջարկություններ:Նպատակն է տրամադրել 12-րդ շրջանում քաղաքային նախագծման, պլանավորման և շինարարական աշխատանքների մանրամասն և իրագործելի ուղեցույց՝ առանց վնասելու շրջանի ձևավորված քաղաքային ինքնությունը: Դասակարգելով 12-րդ շրջանի 6 ենթաշրջանները, հարկ է նկատի առնել դրանցում պատմականորեն ձևավորված քաղաքաշինական միջավայրի ինքնության պահպանվածության աստիճանը, պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի առկայությունը, քաղաքային բանվածքի պահպանվածությունը և այլն:

Ուշադրության արժանի հանգամանք է նաև հանրային տարածքների քաղաքաշինական և ծավալատարածական կազմակերպումը որպես հանրային կյանքի կազմակերպման գոտի և ինքնության պահպանության գործիք, որպիսիք *Հասանաբադ և Թուփխանեի* հրապարակներն են և Ազադի (ավանդականության ու հիշատակության խորհրդանիշ) և Միլադ (տեխնոլոգիայի և արդիականության խորհրդանիշ) վեհաշուք աշտարակների հորինվածքները: Երկուսն էլ 12-րդ վարչական շրջանից դուրս են, բայց ըստ իրենց հորինվածքային առանձնահատկությունների ու քաղաքաշինական դիրքի՝ ունեն նշանակալի դեր քաղաքի ձևավորված ինքնության մեջ՝ որպես ազգային խորհրդանիշ և տեսարժան վայր: Այսպիսով՝ վերը թվարկվածները, ինչպես նաև *Հավելվածներում տեղ գտած* շինությունները 12-րդ վարչական շրջանը դարձնում են գրավչություն ունեցող տարածք, և ձեռք բերում արժեքավորություն՝ հետագա զարգացումների ընթացքում թելադրելով նոր կառուցապատումների մասշտաբը, զանգվածայնությունը, հորինվածքային ամբողջականությունը:

12-րդ վարչական շրջանում իրականացվել է սոցիոլոգիական հարցում: Բաժանվել է 120 հարցաթերթիկ, ստացվել է 92 լրացված: *Մասնակցային մոտեցման առումով* ընտրանքը կազմվել է տեխնիկական կրթություն ունեցողներից (ճարտարապետություն, քաղաքաշինություն և այլն): Գործոնները բաժանվել են չորս կատեգորիաների՝ *մշակութային չափումներ* (մշակույթ, խորհրդանիշներ, արժեքներ և նորմեր, կրոն), *մարդկային գործունեություն* (տարածություն, ձև, գործառույթ), *կլիմա* և *տեխնածին նյութ*: Լայկերտի սանդղակի հիման վրա մշակված հարցաթերթը ներառել է ճարտարապետական ինքնությունը ձևավորող 9 գործոններ: Ըստ արդյունքների, քաղաքային տարածքը պետք է նախագծվի էկոլոգիական, սոցիալական ու տնտեսական ասպեկտները նկատի առնելով, ինչպես նաև նոր շինարարության և կանաչ տարածքների միջև ինտեգրված պլան մշակելով, որը կնպաստի տնտեսական և սոցիալական զարգացմանը: Կարևորվել է ներդաշնակության ստեղծումը՝ զարգացող նոր քաղաքային տարրերի և տարածքի մշակութային-պատմական արժեքի միջև: Հարցվածներն ընդգծել են նաև հանրային մասնակցությամբ քաղաքային միջավայրի

ինքնության պահպանման խթանման հանգամանքը՝ առաջարկելով փոփոխություններ կատարել գործող նախագծման կարգավորիչ կանոնակարգերում:

Կատարվել է նաև քաղաքային ինքնության գնահատում հետևյալ չափորոշիչների հիման վրա. *տեղանքի տնտեսական բնութագրերը, պատմամշակութային առանձնահատկությունները, քաղաքաշինական կառուցվածքը, ձևակազմությունը, հանրային տարածքներ, քաղաքի բնական լանդշաֆտի հատվածներ, բնակչություն, սոցիալական բնութագրերը, առօրյա կյանքի որակ:* Քաղաքաշինական ինքնության հետազոտությունները խմբավորվել են հետևյալ հիմնական դասերում՝ *որակական, քանակական, խառը մեթոդներով հետազոտություն:* Առաջարկվել է քաղաքային միջավայրի ինքնության պահպանության արդյունավետ գործիքակազմ՝ բնակավայրերի հեռանարային զարգացման գործընթացում *(ռազմավարական վերլուծություն, ախտորոշում և ձևակերպում, գնահատում, ուսուցում և իրականացում, և վերջապես՝ ելքի ռազմավարություն և կայունության ապահովում)*: Կանոնակարգի բաղադրիչները համակարգված կիրառելու նպատակով առաջարկվել է *ստուգաթերթ-չափորոշիչների* ժողովածու՝ տեղանքի ինքնությունը գնահատելու և հեռանկարային կանոնակարգման բաղադրիչներն առաջադրելու համար: Ինքնության բնորոշման համար առաջարկվում է գնահատման *եռամակարդակ* (բարձր, միջին, ցածր) ստուգաթերթ.*մակարդակ*՝ քաղաքաշինական բաղադրիչների ստորադասության առումով (քաղաք/շրջան/թաղամաս, շենքեր/միջավայր, սպառողի մակարդակ), *հիմնական բնորոշիչ* (բնական միջավայր, քաղաքային բանվածք, ենթակառուցվածք, հողօգտագործում և այլն), *ենթաբաղադրիչ* (կառուցապատման տիպաբանություն, համայնապատկեր, օրինաչափություններ և այլն): Այն ծառայում է ուղեցույց՝ կանոնակարգելու և գնահատելու ինքնության պահպանությանը միտված միջամտությունների շրջանակը: Կանոնակարգերի հիմքում են ինքնության ապահովման հիմնական բաղադրիչները, այն է՝ *միջավայրը և մարդիկ,* և նշված երկուսի միջև փոխազդեցությունները:

Հետազոտության հիմնական մոտեցումն է նաև Թեհրանի 12-րդ վարչական շրջանի քաղաքային միջավայրի ինքնության պահպանման և տնտեսական վերականգնման մեթոդաբանություն առաջարկելը, որը պատմական ժառանգություն է և ունի արժեքավոր ֆոնային շենքեր, միաժամանակ ինտեգրելով ժամանակակից տարրեր՝ ապահովելով, որ միջամտությունը ներդաշնակ լինի գոյություն ունեցող քաղաքային հյուսվածքի միասնության և ամբողջականության հետ: Դիտարկվել են՝ 1) *Քաղաքային ժառանգության շարունակականությունը* (քաղաքի ճարտարապետական ոճերի համապարփակ գնահատումը՝ առաջնորդվելով նրա եզակի քաղաքային ժառանգությունը պահպանելու հրամայականով), 2) *Մշակութային կողմնորոշումն ըստ քաղաքային տարածքի* (ձգտում է ձևակերպել ոճային մոտեցումներ՝ հարմարեցված քաղաքի տարբեր տարածքների առանձնահատուկ մշակութային նրբերանգներին), 3) *Քաղաքային ոճի կառավարման գործող կանոնակարգերի ինտեգրումն ու ընդլայնումը* (առաջարկվում է ստեղծել ճարտարապետական ոճի կառավարման համապարփակ

ուղեցույց և իրականացման ծրագրեր՝ բարձրացնելով քաղաքի քաղաքային ոճի կառավարման ընդհանուր շրջանակի արդյունավետությունն ու միասնականությունը):

Առաջարկվում են կառավարման ռազմավարություններ՝ «ուղեցույցներ» և՛ «մանրամասն կանոնակարգեր»: «Ուղեցույցները» ռազմավարականորեն առաջարկում են 12-րդ շրջանի հիմնական քաղաքային տարածքը բաժանել առանձին կառավարման գոտիների՝ պատմական ժառանգության տարածքներ (գոտիներ) և ֆունկցիոնալ զարգացման տարածքներ (գոտիներ), որոնցից յուրաքանչյուրը դասակարգվում է «առաջնահերթ» կառավարման գոտիների և «ընդհանուր» կառավարման գոտիների՝ հիմնվելով *հանգույցային և գծային տարրերի* վրա, սահմանելով կառավարման երկու հիերարխիկ մակարդակներ: *Հանգույցային տարրերը* ներառում են քաղաքային տարածական պատկերի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող տարածքները՝ պատմական թաղամասերը, հիմնական ֆունկցիոնալ գոտիները և կարևոր հանրային տարածքները: *Գծային տարրերը* վերաբերում են հիմնական քաղաքային լանդշաֆտներին (ճանապարհեզրերը): «Մանրամասն կանոնակարգ» բաղադրիչը շենքերը դասակարգում է 4 կառավարման տեսակի՝ ըստ գործառույթների. *բնակելի, առևտրային, գրասենյակային, հասարակական*: Դրանք կարգավորելու համար ուսումնասիրությունը վերցնում է ճարտարապետական ոճի բաղադրիչ տարրերը 12-րդ շրջանի համար մշակված գոտիավորման պլանի կանոնակարգերից:

«Ուղեցույցների» և «մանրամասների» *չափորոշիչների իրականացման եղանակներ.* ճարտարապետական ոճերը պետք է լրացնեն միմյանց՝ ապահովելով *վերևից ներքև մոտեցում* նախագծման բոլոր մակարդակներում՝ դրսևորելով ինչպես ճկունություն, այնպես էլ կոշտություն: «Ուղեցույցներում» նշված կառավարման բովանդակության հիման վրա տեղական իշխանությունները պետք է մշակեն Թեհրանի 12-րդ շրջանի ճարտարապետական ոճի նախագծման մանրամասն տեղական ուղեցույցներ՝ տեղական կառավարման վրա հիմնված պլանավորման համար: Նախագծման մանրամասն տեղական ուղեցույցներ ևս պետք է մշակվեն՝ ծառայելու թաղամասի առկա քաղաքաշինական արդիականացման և հեռանկարային նախագծման առաջարկները կանոնակարգելու: Դրանց դրույթների հիման վրա պետք է մշակվեն *տեխնիկական կանոնակարգեր*՝ ներառելով ուրվագծեր, աղյուսակներ և բացատրական նշումներ, հստակորեն սահմանելով ճարտարապետական ոճի կարգավորման շրջանակը՝ ներկայացնելով ձևավորված քաղաքային ինքնության պահպանության վրա հիմնված քաղաքաշինական կազմակերպման պահանջները երեք մակարդակներում. 1) *բարձրագույն մակարդակ.* ներառում է 12-րդ շրջանի պատմամշակութային բնույթը, բնական լանդշաֆտի բնույթը և քաղաքաշինական բնույթը. 2) *միջին մակարդակ.* ընդգրկում է 12-րդ շրջանը ձևավորող հատակագծային տարրերի՝ քաղաքային հիմնական ճանապարհների և դրանց հարակից հատակագծային միավորների ճարտարապետական կազմակերպումն ու կանոնակարգումը. 3) *միկրո մակարդակ.* կենտրոնանում է ճարտարապետական խմբերի, առանձին շենքերի, ճարտարապետական համալիրների, համակառույցների և

ուղենիշային կառույցների վրա: Պետք է նկատի առնվեն նաև ինքնության կառավարման գործոնները՝ ճարտարապետական ոճը, տանիքի ձևերը և ճարտարապետական նախագծման առանձնահատկությունները, որոնք հստակ սահմանված չեն: Կառավարման քաղաքականության ներկայիս փաստաթղթերը չունեն խորություն և ճշգրտություն, հաճախ մշակվում են ինքնուրույն՝ համընկնող բովանդակությամբ: Ուստի, ինտեգրված և համակարգված շրջանակը բացակայում է, ինչը դժվարացնում է այս ուղեցույցներին արդյունավետորեն հետևելը: Ավելին, այս քաղաքականության մեջ բացակայում են պլանավորման հաստատման գործընթացի և դրա գործնական կիրառման վերաբերյալ հստակ կանոնակարգեր՝ դրանք դարձնելով ոչ համարժեք՝ որպես իրավաբանորեն պարտադիր հաստատման հղումներ: Ըստ էության, գնահատման արդյունքը պետք է համապատասխանի «ուղեցույցներում» նշված պահանջներին: Ստուգաթերթը կօգնի կանխել արգելված բնույթի միջամտությունները, որոնք կվնասեն 12-րդ շրջանի քաղաքաշինական ինքնությանը ճարտարապետական ոճի առումով: Անհրաժեշտ է ներդնել նաև մոնիթորինգի համակարգ՝ ապագայում հաստատված շինարարության իրականացման արդյունավետությունն ու որակը վերահսկելու համար:

Կարևոր է 12-րդ շրջանի տարբեր գործառնական նշանակության և տարբեր մասշտաբի քաղաքաշինական դրվագների գնահատումը ինքնության պահպանության ենթատեքստում: Շրջանի քաղաքային ինքնությունը վերլուծում է նրա 6 ենթաշրջանների տարածքների պատմական զարգացումը և ճարտարապետությունը՝ խորհրդանշական շենքերից մինչև փոքր բնակելի կառույցներ: Նպատակն է ցույց տալ, թե ինչպես են տարբեր ճարտարապետական շերտերը ձևավորել քննվող շրջանի ինքնությունը՝ ընդգծելով ժառանգության պահպանման և ժամանակակից հարմարվողականության միջև հավասարակշռությունը:Վերջում ներկայացվել է բուրգային դիագրամ, որը տեսողականորեն ամփոփում է պատմական նշանակության և քաղաքային ինքնության բաշխումը ենթաշրջանների միջև: Ուսումնասիրելով ամեն ենթաշրջանի եզակի բնութագրերը և պատմական համատեքստը՝ ընդգծվում է Թեհրանի քաղաքային լանդշաֆտի ճարտարապետական ինքնության պահպանման կարևորությունը՝ ապահովելով, որ ապագա զարգացումները ներդաշնակվեն քաղաքի առկա պատմական հյուսվածքի հետ:

Այսպիսով՝ 12-րդ վարչական շրջանը լինելով Թեհրանի կենտրոնական հատվածը, կառուցապատվել է աստիճանաբար՝ քաղաքի պատմությունն ու կենցաղն արտահայտող հիմնական կառույցներով, որի ձևավորման ընթացքը, բաղադրիչներն ու պաթոլոգիան, կառուցապատված միջավայրի գոտևորումն հատկանշական են: Այստեղ առաջնահերթություն է ժամանակակից քաղաքային կյանքի պահանջների հավասարակշռումը պատմական ամբողջականության պահպանման անհրաժեշտության հետ՝ ապահովելով ժամանակակից գործառույթների անարգել իրականացումը և համադրելով դինամիկ տարրերով՝ ի դեմս ժամանակակից քաղաքին հատուկ քաղաքաշինական նորամուծությունների: Մյուս կողմից, ներքևից վերև և

վերևից ներքև մասնակցության մեթոդների համադրությունը կարող է լինել գործիք, որի միջոցով քաղաքային նախագծումը կարող է խթանել տարածքների վերափոխումը կամ զարգացումը տարբեր ինստիտուցիոնալ մակարդակներում, մեծացնել քաղաքացիների միջև փոխազդեցությունները՝ «միավորելով և ոգեշնչելով» քաղաքային որակյալ տարածք զարգացնելու տեսլականի շուրջ՝ օգնելով որոշում կայացնողներին բացահայտել տարածքային զարգացման ավելի հարմար վարկածներ՝ հիմնվելով տնտեսական, բնապահպանական, սոցիալական զարգացումների ներկա և ապագա սցենարների վրա: Ձևավորված միջավայրի ինքնության պահպանության և հետագա զարգացման հավասարակշռության ու ներդաշնակ գոյակցության ապահովման նպատակով առաջարկվում է 12-րդ վարչական շրջանի տարածքը տարանջատել առանձին տարածակառավարման գոտիների՝ «առաջնահերթ» կառավարման և հեռանկարային «ընդհանուր» կառավարման գոտիների՝ ամբողջական պատմական ժառանգության պահպանման տարածքներ (գոտիներ), անցումային ժառանգության պահպանման/նոր զարգացման ինտեգրված տարածքներ (գոտիներ), ամբողջական ֆունկցիոնալ զարգացման տարածքներ (գոտիներ): Կառավարման համար դրանց նկատմամբ սահմանվող կառուցապատման պայմանակարգերը հիմք կհանդիսանան շրջանի թաղամասերում իրականացվող քաղաքաշինական գործունեության համար քաղաքային իշխանությունների կողմից տրամադրվող ստուգաթերթի համար՝ պահպանելու և կանոնակարգելու քաղաքային միջավայրի ինքնությունը՝ ներդնելով նաև մշտադիտարկման համակարգ վերահսկելու համար գործնականում նախանշումների իրականացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քաղաքի ինքնության պահպանումը կայուն ճարտարապետական միջավայրի շրջանակներում բարդ, սակայն կենսական մարտահրավեր է քաղաքաշինարարների, ճարտարապետների և համայնքի շահառուների համար: Քանի որ քաղաքները շարունակում են զարգանալ, ժառանգության ճանաչման ու ինտեգրման կարևորությունը նորարարական պրակտիկայի շարունակական երկխոսության ենթատեքստում էական նշանակություն կունենան այս փոխկապակցված դիսկուրսները ներդաշնակեցնելու համար:
2. Իրանը կարողացել է պահպանել իր բնակավայրերի քաղաքային միջավայրի ամբողջականությունն ու ինքնությունը՝ ինքնություն ստեղծող գործոնների շնորհիվ պահպանելով մշակութային արժեքները: Դրանց թվում են Սեֆյան, Քաջարյան, Փահլավյան, հեղափոխական, հետհեղափոխական ու գլոբալիզացիոն ազդեցությունների ֆոնին Իրանի քաղաքների, այդ թվում՝ Թեհրանի ձևավորված ներկայիս քաղաքաշինական ուրվապատկերը:
3. Կենտրոնական Թեհրանի ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանումը սոսկ գեղագիտական խնդիր չէ, այլ անհրաժեշտություն, որը պահպանելով մշակութային ժառանգությունը, խթանում է տնտեսական կենսունակությունը, կայունությունը և ճկունությունը, երաշխավորելով, որ զարգանալով այն կմնա կենսունակ և ծաղկող մեգապոլիս, որը հարգում է իր անցյալը՝ ընդառաջ գնալով ապագային:
4. Չկանոնակարգված մոտեցումները կարող են հանգեցնել մշակութային ժառանգության ոչնչացմանն ու ինքնության կորստին: Քաղաքի ինքնությունը բարդ հասկացություն է, որն արտացոլում է քաղաքի կամ քաղաքային տարածքի հստակ ֆիզիկական, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները:
5. Քաղաքների և դրանց բաղադրիչների նախագծման որակը կարող է մեծ ազդեցություն ունենալ բնակչության կյանքի որակի վրա. քաղաքացիական հպարտության զգացում սերմանել բնակիչների շրջանում և ստեղծել առավել բարենպաստ սոցիալական պատկեր տարածքի բնակիչների և այցելուների համար: Ուստի, ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման խնդիրների համար ճարտարապետական պլանավորման առաջնահերթություն պետք է լինեն մշակութային պարամետրերը, այնուհետև մարդու գործունեությունը (տարածություն, ձև, գործառույթ), կլիման և նյութերը:
6. Ձևավորված միջավայրի ինքնության պահպանության և հետագա զարգացման հավասարակշռության ու ներդաշնակ գոյակցության ապահովման նպատակով առաջադրվում են ճարտարապետական ոճի կառավարման/կանոնակարգման համակարգի «ուղեցույցներ» և «մանրամասն կանոնակարգեր»՝ դիտարկվող տարածքը տարանջատելով առանձին տարածակառավարման գոտիների՝ «առաջնահերթ» կառավարման և հեռանկարային

«ընդհանուր» կառավարման գոտիների՝ յուրաքանչյուրին վերագրելով իր չափորոշիչների համալիրը:

7. Մասնակցային մեթոդների համադրությունը կարող է լինել գործիք, որի միջոցով քաղաքային նախագծումը կարող է խթանել տարածքների վերափոխումը կամ զարգացումը տարբեր ինստիտուցիոնալ մակարդակներում: Այն կարող է մեծացնել քաղաքացիների միջև փոխազդեցությունները՝ «միավորելով և ոգեշնչելով» քաղաքային որակյալ տարածք զարգացնելու տեսլականի շուրջ՝ օգնելով որոշում կայացնողներին բացահայտել տարածքային զարգացման ավելի հարմար վարկածներ:

Ատենախոսության թեմայով հրապարակումների ցանկ

1. Rostam Afshar, B., Petrosyan, N., Environment and urban sustainability, International Journal of Innovative Technology and Exploring Engineering (IJITEE), V.7, I 5, 2018, pp. 27-29.
2. Rostam Afshar, B., Contemporary Architectural Problems in Tehran, Proceeding of the 10th International Conference on Contemporary Problems of Architecture and Construction, Beijing, China, 2018.
3. Rostam Afshar, B., The role of symbols and signs in the formation of identity in Iranian architecture, Scientific Journal of Research Studies in Civil Engineering, Architecture and Urban Planning, Tehran, 2020, P. (In Iranian)
4.Rostam Afshar, B., Petrosyan, N., Architectural Planning for Preservation of Identity in Contemporary Urban Landscape, International Journal of Progressive Sciences and Technologies (IJPSAT), vol. 31, N 2, 2022, pp. 88-94.
5.Rostam Afshar, B., The identity preservation issue in the historical 12th district of Tehran city, "The Way of Science" (International scientific journal), vol. 12 (118), Volgograd, 2023, pp.12-15.
6. Rostam Afshar, B., Preservation Strategies and Issues for Tehran City Identity in a Rapidly Changing Urban Landscape, European Online Journal of Natural and Social Sciences, Vol 14, No 1, 2025, pp.19-27.
7. Rostam Afshar, B., Historical evolution of urban planning and architecture of Tehran in the XVIII-XX centuries, "Научные горизонты" (International scientific journal) № 3 (91), Belgorod, 2025, pp. 4-23.

БАХИЕ РОСТАМ АФШАР
АРХИТЕКТУРНО-ПЛАНИРОВОЧНЫЕ ПРОБЛЕМЫ СОХРАНЕНИЯ ИДЕНТИЧНОСТИ В СОВРЕМЕННОМ ГОРОДСКОМ ЛАНДШАФТЕ В ЦЕНТРЕ ТЕГЕРАНА

РЕЗЮМЕ

Диссертация посвящена проблемам архитектурного проектирования, направленным на сохранение идентичности в современном городском ландшафте центральной части Тегерана, которые приобрели большой резонанс и актуальность в последние десятилетия, привлекая внимание специалистов, исследователей, городских властей и общественных кругов. Тема диссертации – рассмотрение архитектурно-планировочные вопросов сохранения идентичности в современном городском ландшафте на примере 12-го административного района Тегерана. В современном глобализированном мире перед архитекторами стоит задача баланса между локальной идентичностью и международными тенденциями и влияниями. Поэтому вопросы архитектурного проектирования, направленные на сохранение идентичности в современном городском ландшафте, были рассмотрены на примере 12-го админрайона Тегерана, являющегося историческим ядром города, где расположены объекты, имеющие большую национальную ценность. Диссертация включает введение, три главы с соответствующими выводами, общими заключениями и библиографией, а также приложение с фотографиями, картами, схемами и таблицами. *Во введении* раскрываются актуальность, цель, задачи, методология исследования, научная новизна, актуальность и практическая значимость работы.

Актуальность диссертации: Поскольку исторический центр Тегерана (а именно 12-й админрайона) переживает быстрое развитие, характеризующееся современными архитектурными стилями и расширением инфраструктуры, растет озабоченность по поводу сохранения уникальной исторической идентичности и архитектурного наследия города. Проблемы включают в себя согласование новых архитектурных вмешательств с традиционной иранской эстетикой, сохранение исторических достопримечательностей среди застроенной среды и продвижение чувства места для жителей и гостей. Усилия по городскому планированию направлены на включение элементов народного плонирования и сохранение культурной идентичности, но часто сталкиваются с препятствиями. Текущее исследование сосредоточено на определении стратегий планирования, которые интегрируют традиционные элементы в современные рамки, способствуя чувству места и культурной преемственности. Это исследование жизненно важно для разработки устойчивой городской среды, которая уважает богатую историю Тегерана - учитывая его развивающуюся городскую структуру.

Целью исследования является предложение инструментария для интеграции идентичности, представляющей различные периоды городского развития, для сохранения, переоценки и воссоздания исторического городского ландшафта в исторической части Тегерана. В рамках этого процесса необходимо предложить соответствующую модель интеграции новых и старых построек, с помощью которой можно будет обеспечить соответствие текущих процессов городского развития принципам устойчивого развития, в исключительных случаях, путем осуществления существенных вмешательств. Посредством всестороннего анализа 12-го админрайона, выбранного в качестве ситуационного примера, и представления реалистичных предложений, данная работа направлена на изучение того, как предлагаемые стратегии архитектурного проектирования могут эффективно сохранить идентичность в современном городском ландшафте исторической части Тегерана.

Методология диссертации основана на комплексном системном методе. Проведены сравнительный градостроительный и историко-архитектурный анализы, документальные и качественные исследования. Исследование включает в себя как критический анализ архивных и научных материалов, так и результаты полевых исследований и визитов. Предложен конкретный набор инструментов, используемый для выявления, обработки и анализа информации по теме. Был проведен социологический опрос. Конечным результатом стала оценка восприятия респондентами факторов, формирующих городскую идентичность.

Теоретическая и практическая разработка темы: Проведено изучение научных трудов и архивных материалов, полевое исследование на месте, затем обобщение данных. Разработаны сценарии с использованием искусственного интеллекта для описания влияния ситуативных изменений городского развития в контексте восприятия идентичности на основе реалистичного изображения.

Научная новизна диссертации заключается в том, что сначала была рассмотрена роль идентичности в обеспечении качества городской среды, а затем представлены некоторые общие физические показатели устойчивого города. Во-вторых, анализ факторов идентичности 12-го администрайона Тегерана, что в условиях городского развития возникают многочисленные экологические проблемы, угрожающие физическим повреждением исторической части города, в то время как идентичность устойчивой городской среды может быть достигнута путем укрепления, оживления и качественного улучшения экономической, социальной и, особенно, физической структуры таких районов. В ходе исследования разработан метод оценки городской устойчивости на основе урбанизации Тегерана.

Первая глава- «Общие сведения о территории и историческом развитии Тегерана в контексте современного градостроительства»: представлен информативный контент, охватывающий ландшафт Тегерана, географические особенности, обстоятельства его исторического развития и формирования архитектурного наследия, современное состояние городского планирования, а также существующие проблемы в застроенной среде, проблемы городской инфраструктуры, актуальность сохранения исторических центров и различные патологические проблемы, с которыми сталкивается город.

Вторая глава-«Проблемы сохранения идентичности в современном городском планировании Тегерана»: теоретически представлена концепция идентичности в контексте архитектуры и городского планирования, а также проблемы архитектурного проектирования сохранения современного городского ландшафта Тегерана.

Третья глава-«Морфология и эволюция: историческое и градостроительное развитие 12-го администрайона Тегерана»: представлен 12-й администрайон, застроенный историческими зданиями, где рассматривается роль отдельных компонентов городского развития в контексте сохранения идентичности: значение сохранения, реконструкции или адаптивного повторного использования в процессе обеспечения преемственности архитектурного наследия. Предлагается система критериев для гармоничной интеграции будущих градостроительных инициатив в формирующуюся среду, не нарушая при этом городской идентичности. В целях сохранения идентичности формируемой среды и обеспечения баланса и гармоничного сосуществования дальнейшего развития предлагаются «руководящие принципы» и «детальные регламенты» системы управления/регулирования архитектурных стилей. На их основе предлагается разделить территорию 12-го администрайона на отдельные территориальные зоны управления: «приоритетного» управления и перспективные «общего» управления, закрепив за каждой из них свой набор критериев.

Общие выводы обобщают материал и фиксируют полученные результаты.

BAHIEH ROSTAM AFSHAR

ARCHITECTURAL PLANNING ISSUES OF IDENTITY PRESERVATION IN A MODERN URBAN LANDSCAPE IN THE CENTER OF TEHRAN

`SUMMERY

The thesis is devoted to the architectural planning issues of preserving identity in the modern urban landscape of the central part of Tehran, which have gained great resonance and relevance in recent decades, attracting the attention of specialists, researchers, city authorities, and community circles. Topic of the thesis is the consideration of architectural planning issues of preserving identity in the modern urban landscape with the example of the 12th administrative district of Tehran. In today's globalized world, architects are faced with the challenge of balancing local identity with international trends and influences. Ignoring identity in modern urban planning design significantly damages the structure of the city. Therefore, the architectural planning issues of preserving identity in the modern urban landscape were considered using the example of the 12th administrative district of Tehran, which is the historical core of the city, containing structures of great national value.

The thesis includes an introduction, the following three chapters with relevant conclusions, general conclusions, and a bibliography, as well as an appendix containing photographs, maps, diagrams, and tables. *The introduction* provides the relevance, purpose, objectives, research methodology, scientific novelty, actuality, and practical significance of the work.

Actuality of the thesis: As the historical city center of Tehran (namely, the 12th administrative district) undergoes rapid development characterized by contemporary architectural styles and infrastructure expansion, there is an increasing concern about maintaining the city's unique historical identity and architectural heritage. Challenges include reconciling new architectural interventions with traditional Iranian aesthetics, preserving historic landmarks amidst dense construction, and promoting a sense of place for residents and visitors. Urban planning efforts aim to incorporate vernacular design elements and safeguard cultural identity but often face obstacles such as regulatory constraints, economic pressures, etc. The current study focuses on identifying planning strategies that integrate traditional elements within modern frameworks, fostering a sense of place and cultural continuity. This research is vital for developing sustainable urban environments that respect Tehran’s rich history while accommodating its evolving urban fabric.

The aim of the study is to propose a toolkit for integrating identities representing different periods of urban development in order to preserve, re-evaluate and recreate the historical urban landscape in the historic part of Tehran. In this process, it is necessary to propose an appropriate model for integrating new and old buildings, which can ensure that the current urban development processes are in line with the principles of sustainable development, in exceptional cases, through significant interventions. Through a comprehensive analysis of the 12th district as a case study and the presentation of realistic proposals, this paper aims to explore how the proposed architectural planning strategies can effectively preserve the cultural identity in the contemporary urban landscape of the historic part of Tehran.

The methodology of the study is based on a complex system method. Comparative urban planning, historical and architectural analysis, documentary and qualitative research were conducted. The study includes both a critical analysis of archival and scientific materials, and the results of field research and visits. A specific set of tools is proposed for identifying, processing and analyzing information on the topic. A sociological survey was conducted. The final result was an assessment of respondents' perception of the factors that shape urban identity.

Theoretical and practical development of the topic: A study of scientific works and archival materials, a field study on site, and then a summary of the data was conducted. Scenarios were developed using artificial intelligence to describe the impact of urban development situational changes in the context of identity perception based on a realistic image.

Scientific novelty of the thesis: The scientific novelty of this work is that first the role of identity in ensuring the quality of the urban environment was taken into account, and then some general physical indicators of a sustainable city were presented. Secondly, the analysis of the identity factors of the 12th administrative district of Tehran revealed that in terms of urban development, numerous environmental problems arise that threaten the physical damage of the historical part of the city, while the identity of a sustainable city environment can be obtained by strengthening, revitalizing, and qualitatively improving the economic, social, and especially physical structures of such areas. The research developed a method for assessing urban sustainability based on the urbanization of Tehran.

The first chapter is titled "General information about the territory and historical development of Tehran in the context of modern urban planning." The chapter provides informative content that covers Tehran's landscape, geographical features, the circumstances of its historical development and architectural heritage formation, the current state of urban planning, as well as existing problems in the built environment, climate issues, population growth, urban infrastructure challenges, the urgency of preserving historical centers, and various pathological problems facing the city.

The second chapter is titled "Identity Preservation Issues in Contemporary Urban Planning in Tehran (Theoretical Framework)." The chapter theoretically presents the concept of identity in the context of architecture and urban planning, as well as the architectural design issues of preservation in the contemporary urban landscape of Tehran.

The third chapter is titled "Morphology and evolution: historical and urban development of the 12th Administrative District of Tehran." The chapter presents the 12th administrative district of Tehran, built up with historical buildings, where the role of individual urban development components is considered in the context of identity preservation: the significance of preservation, reconstruction, or adaptive reuse in the process of ensuring the continuity of architectural heritage. A system of criteria is proposed to harmoniously integrate future urban development interventions into the formed environment, without disrupting the urban identity. In order to preserve the identity of the formed environment and ensure the balance and harmonious coexistence of further development, “guidelines” and “detailed regulations” of the architectural style management/regulation system are proposed. Based on them, it is proposed to divide the territory of the 12th administrative district into separate territorial management zones: “priority” management and prospective “general” management zones, assigning each of them its own set of criteria.

The general conclusions summarize the material and record the results obtained.